ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. Անհաղթի փ. հ. 11, (+374 11) 518-844, էլ. փոստ՝ qanaqer_zeytun@yerevan.am

«Համախոհ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Եղիազարյանին
Հասցե՝ ք. Երևան, Վերին Անտառային փ. 144/3շ., բն.17

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը ամբողջությամբ լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Եղիազարյան,

Երևանի քաղաքապետարանի /այսուհետ՝ Պատվիրատու/ և «Համախոհ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կապալառու/ միջև 11.07.2023թ.-ին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/163-3» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 1.1 կետի համաձայն կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ հ. 1 հավելվածով՝ սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքների աշխատանքները /այսուհետ՝ աշխատանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վճարել դրա համար:

Վերոնշյալ պայմանագրի հ.1 հավելվածով՝ ժամանակացույցի պայմանագրի կատարման ժամկետը սահմանված է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.09.2023թ.-ը ներառյալ, սակայն Կատարողը վերը նշված պայմանագրով սահմանված ժամկետում չի կատարել պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի /բ/ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները եթե՝ Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի, 1–ին մասի, 6–րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345 հոդվածի 1-ին մասի համաձայն «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408 հոդվածի համաձայն «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 2-րդ մասի համաձայն «Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որը զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս»:

3-րդ մասի համաձայն «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 469 հոդվածի 5-րդ մասի համաձայն «Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կատարողն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով»:

Երևանի քաղաքապետի 2020թ.-ի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրի և (կամ) կանխավճարի և (կամ) որակավորման

ապահովման վերադարձի, պայմանագրի լուծման, պայմանագրի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացի իրականացման գործառույթները վերապահվել են վարչական շրջանների ղեկավարներին:

Վերը նշված պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը Կատարողի կողմից չի իրականացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 14.11.2018թ. թիվ 3407-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի ամբողջությամբ հրաժարվում է կնքված պայմանագրից, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՏԱԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Կատարող՝ Ս. Ղամբարյան
Հեռ. 011518890